# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2017Թ.-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Վայոց ձորի մարզպետարանի ներքին աուդիտի 2017թ.-ի տարեկան հաստատված ծրագրի շրջանակներում <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի համաձայն ներքին աուդիտի բաժնի կողմից 23.05.2017թ.-ից մինչև 24.08.2017թ.-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվել և իրականացվել է 7 միավոր աուդիտ, որից 3 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում, 1 միավոր մարզպետարանի գնումների գործընթաց, 3 միավոր մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում: ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում և գնումների գործընթացի գնումների օրենսդրությանը համապատասխանության աուդիտ՝ գործունեության ոլորտը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության աուդիտ: Նշված ՓԲԸ-ներում, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում և գնումների գործընթացի մասով աուդիտի ստանդարտների համաձայն, այդ թվում բավարար տեղեկությունների ֆաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանը, գործունեության իրավական ակտերին համապատասխանությանն առնչվող բոլոր գործառույթները: Հրավիրվել է Ներքին աուդիտի կոմիտեի 2 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, կայացվել համապատասխան որոշումներ: Աուդիտի ենթարկված առողջապահական ՓԲԸ-ների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին տրվել են հանձնարարականներ, ներկայացվել առաջարկություններ արձանագրված թերությունների և խախտումների վերացման ուղղությամբ: Միաժամանակ այդ ուղղությամբ ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է խորհրդատվություն և վերահսկողության գործընթաց:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ, ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

**Ներքին աուդիտի բաժնի պետ՝** **Վ. Կարապետյան**